ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 ապրիլի երեքշաբթի 2024
տպագրության ԺԴ տարի

59
(2909)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ԸՆԴԴԻՄԱԴԻՐ՝ ՎԵՐՋԻՆ ՊԱՇՏՈՆՅԱՆ ԷՐ». ԱՄՆ ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

ԱՄՆ Պետդեպարտամենտի տարեկան՝ 2023 թվականի զեկույցում ՀՀ ժողովրդավարական ինստիտուտների եւ սպառնալիքների մասին ուշագրավ անդրադարձներ կան: Նկարագրված են կոռուպցիայի, դատական անկախության խոչընդոտների եւ իրավական այն փաստացի «բեսպրեդելի» մասին, որում գտնվում է Հայաստանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ զեկույցում անդրադարձ կա նաեւ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի ապօրինի հեռացմանը այդ պաշտոնից: «Քաղաքական գործընթացին մասնակցելու ազատություն» բաժնում կարդում ենք. «Հուլիսի 11-ին խորհրդարանական մեծամասնությունը, «Ազգային ժողովի կանոնակարգի» համաձայն, քվեարկությամբ դադարեցրեց ընդդիմադիր պատգամավոր Թագուհի Թովմասյանի լիազորությունները՝ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում, այն հիմնավորմամբ, որ նա բացակայել էր Ազգային ժողովի խորհրդի (ղեկավար կոմիտեի) նիստերի գերակշիռ մասից: Խորհրդարանական մեծամասնությունը նաեւ պնդում էր, որ ապրիլի 4-ին Թագուհի Թովմասյանը չի կասեցրել «ատելության խոսքը», երբ նրա նախագահած հանձնաժողովը քննարկել է Մարդու իրավունքների պաշտպանի թափուր տեղի համար առաջադրված թեկնածությունները: Թովմասյանը, ըստ հաղորդումների, Ազգային ժողովին նախապես տեղեկացրել է, որ վատառողջ լինելու պատճառով՝ հուլիսի 11-ի նիստին չի կարողանա ներկա գտնվել, սակայն խորհրդարանական մեծամասնությունը, այնուամենայնիվ, այդ օրը հարցը դրել է քվեարկության: Պատգամավորը լիազորությունների դադարեցման հարցով դիմել է դատարան: Մինչ լիազորությունների դադարեցումը Թովմասյանն ընդդիմության վերջին ներկայացուցիչն էր, որ Ազգային ժողովում ղեկավար պաշտոն էր զբաղեցնում, քանի որ հանձնաժողովների ընդդիմադիր նախագահների եւ Ազգային ժողովի ընդդիմադիր փոխնախագահի լիազորությունները, խորհրդարանական մեծամասնության քվեարկությամբ, ավելի վաղ դադարեցվել էին աշխատակարգի ու կանոնակարգերի խախտման պատճառով, իսկ որոշներն էլ հրաժարական էին տվել՝ ի նշան համերաշխության»:



Հակակառուպցիոն դատարանը պաշտոնական ծանուցում է ուղարկել Արցախի «Եղնիկներ» զորամասի հրամանատար, Արցախի հերոս Կարեն Ջալավյանին՝ Քյոխին, որ ներկայանա Հակակառուպցիոն դատարան եւ հարցաքննվի՝ ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի դեմ հարուցված քրեական գործով: Այդ գործն էլ քննվում է դռնփակ դատական նիստի շրջանակներում: Հիշեցնենք՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ին դատախազությունը հայտարարեց, որ Արցախի ՊԲ նախկին հրամանատար, Արցախի նախագահի խորհրդական Միքայել Արզումանյանին մեղադրանք է ներկայացվել՝ 2020 թվականի Արցախյան պատերազմի ընթացքում ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող «Արեգա» բարձունքը եւ հարակից մարտական դիրքերն ազատագրած անձնակազմին «նահանջ» հրաման տալու համար: Արզումանյանը կալանավորվել է սեպտեմբերի 1-ին եւ մինչ օրս գտնվում է կալանքի տակ:



ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, թեեւ նախորդ տարի՝ քաղաքացու վրա թքելուց հետո, այդպես էլ մնաց անպատիժ, բայց նրա մասնակցությամբ այդ սկանդալային միջադեպը հայտնվել է միջազգային հեղինակավոր կառույցների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես՝ միջազգային Freedom House իրավապաշտպան կազմակերպությունն իր 2024 թվականի զեկույցում անդրադարձել է Ալեն Սիմոնյանի այս խայտառակ պահվածքին՝ գրելով. «Հայտնի դեպքից հետո, երբ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը թքել է քաղաքացու վրա՝ այն բանից հետո, երբ նրան հրապարակավ «դավաճան» են անվանել, քաղաքացիական հասարակության բազմաթիվ կազմակերպություններ իշխանություններից պահանջել են միջոցներ ձեռնարկել բարձրաստիճան պաշտոնյայի դեմ՝ ՔՊ-ին կոչ անելով էթիկայի հանձնաժողով ստեղծել, իսկ իրավապահ մարմիններին՝ խուլիգանություն հոդվածով գործ նախաձեռնել»: Փաստենք, որ որքան էլ Նիկոլ Փաշինյանի իշխանությունն իրեն հռչակել է «ամենաժողովրդավար եւ արդար իշխանություն», բայց ՔՊ-ականներն այլեւս այնքան են հատել կարմիր գծերը, ու նրանց անթույլատրելի վարքն այնքան է աչք ծակում, որ անգամ նրանց մշտապես աջակցող ամերիկյան կազմակերպություններն ու կառույցները չեն կարողանում աչք փակել դրանց վրա:



ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրոյի կողմից 2024 թվականի ապրիլի 22-ին հրապարակված զեկույցում անդրադարձ է կատարվել նաեւ խոշտանգումներին եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքին կամ պատժին ու այլ նույնատիպ չարաշահումներին: 2022 թվականից խոշտանգումների դեպքերի գերակշիռ մասի նախաքննության պատասխանատվությունը վերապահված է քննչական կոմիտեին, սակայն իրավապաշտպան-փաստաբանների դիտարկմամբ՝ կոմիտեի քննիչները չունեն նմանօրինակ գործեր քննելու փորձառություն: Քննչական կոմիտեի կողմից թույլ տրված խոշտանգումների դեպքերով նախաքննությունները վերապահված են Ազգային անվտանգության ծառայությանը, սակայն, իրավապաշտպան-փաստաբանները գտնում էին, որ այս քննություններն անկախ ու թափանցիկ կերպով չէին անցկացվում, եւ ապահովված չէր արժանահավատ նախաքննությունների համար անհրաժեշտ հանրային վերահսկողություն: Ըստ մարդու իրավունքների ակտիվիստների՝ բռնությունների հին ու նոր դեպքերի հետ կապված՝ իրավապահների անպատժելիությունը նպաստել է խնդրի շարունակականությանը. երբ ենթադրյալ մեղավորները շարունակել են զբաղեցնել իրենց պաշտոնները կամ ունեցել են պաշտոնական առաջխաղացում: Մարդու իրավունքների խախտման մի քանի ակնհայտ դեպքերի ընթացք չի տրվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կատարողը քաղաքական դեմք է: Օրինակ՝ առաջին դեպքը, երբ Ալեն Սիմոնյանը թքեց քաղաքացու վրա եւ որեւէ պատասխանատվության չենթարկվեց, սա դարձավ իշխանությունների կողմից վերահսկվող բացարձակ անպատժելիություն: Այս իրավիճակը բացասաբար է անդրադառնում նաեւ իրավապահ համակարգի վրա, որտեղ ուղղորդվում են իշխանության կողմից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑ

«ԱՆԸՆԴՀԱՏ ԳՆԱՑԵԼ ԵՆ ԶԻՋՈՒՄՆԵՐԻ», ՕՍԿԱՆՅԱՆ

Չնայած այն բանին, թե ինչ են ասում Ադրբեջանի եւ Հայաստանի իշխանությունները, Լեռնային Ղարաբաղի հարցը լուծված չէ, փակված չէ եւ մոռացված չէ: Այս մասին ապրիլի 29-ի ֆենարկման ժամանակ ասել է նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը:



Նա հիշեցրել է, որ այնտեղ տեղի են ունեցել էթնիկ զտումներ եւ ցեղասպանություն, ինչի հետեւանքով՝ Լեռնային Ղարաբաղի հայերը հեռացել են իրենց տներից եւ ապաստան գտել Հայաստանում: Նրա գնահատմամբ՝ Հայաստանի անվտանգության խոցելիության բարձրացման պատճառը Լեռնային Ղարաբաղի կորուստն է դարձել, արդյունքում՝ հայկական կողմը կորցրել է «ռազմավարական խորությունը»:

«Ժողովուրդ» օրաթերթը քննարկումից հետո հարցազրույց է ունեցել ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ:

-Պարոն Օսկանյան, Ձեր գլխավորած պատվիրակությունը միջազգային կարեւոր հանդիպումներ էր ունենում դրսում, եւ հիմնական օրակարգը արցախցիների վերադարձի շուրջ կոնսենսուս ձեւավորելն ու երաշխիքներ ստանալն էր: Կխնդրենք ամփոփ ներկայացնել, թե հանդիպումներից ի՞նչ արդյունքներ կան:

-Ես իմ ելույթում էլ նշեցի, որ հարցում առանց Հայաստանի Հանրապետության իշխանության մասնակցության, առանց իրենց կողմից հարցի բարձրացման՝ հստակ ակնկալիքներ ունենալ պետք չէ: Մեր հիմնական խնդիրն այսօր Արցախի հարցը կենդանի պահելն է, որպեսզի ինչ որ հարմար պահի կարողանանք դա օրակարգ բերել: Մեր արածը հիմնականում դա է: Շատ լավ հասկանում ենք, որ առանց Հայաստանի Հանրապետության իշխանությունների մասնակցության դժվար է լինելու: Սակայն Արցախի հարցը կենդանի պահելու առումով՝ անձնապես կարծում եմ, որ դրական արդյունքներ կան:

-Այսինքն՝ երաշխիքների՞ մասին է հարցը:

- Ո՛չ, պարզապես տարբեր շրջանակներում զգում են, որ Հայաստանում կան մարդիկ եւ կառույցներ, կա արցախահայություն, որը ստեղծել է հանձնախումբ եւ խնդրել պաշտպանել իրենց իրավունքները միջազգային ասպարեզում եւ հատկապես՝ իրենց հայրենիք վերադառնալու իրավունքը: Սա արդեն իսկ նպաստում է նրա,, որ առաջանում է գիտակցություն առ այն, որ Հայաստանի իշխանությունների վարած քաղաքականությունը չի արտահայտում ժողովրդի կամքը, եւ կարող է իրավիճակ փոխվել, ու նրանք պատրաստ կլինեն դրան: Եթե Հայաստանը փորձի այդ հարցը բերել օրակարգ, ապա դաշտը պատրաստ կլինի:

-Տեսնում ենք, որ Ադրբեջանը, Արցախն օկուպացնելուց հետո, հիմա էլ անցել է Հայաստանի ինքնիշխան տարածքներին. Տավուշից է տարածքներ ուզում, Սյունիքից, եւ Հայաստանի իշխանություններն էլ դիմադրություն չեն ցուցաբերում ու նոր տարածքներ են զիջում: Արդյո՞ք այս գործընթացը համարում եք իրավաչափ:

-Բացասաբար եմ վերաբերվում, կարծում եմ՝ այդպես է ժողովրդի մեծ մասի դեպքում: Սա անթույլատրելի է, սակայն դարձել է իշխանությունների գործելաոճը:

Մեր իշխանությունները 2018 թվականից էլ չեն հասկացել, չեն իմացել եւ անընդհատ տուրք են տվել ադրբեջանական օրակարգին ու գնացել զիջումների: Եվ պատերազմից հետո բանակցային հարթակում, առհարասարակ, հայկական օրակարգ չի եղել: Ադրբեջանն էլ, լավ գիտակցելով, որ իրենց սպառնալիքները ազդեցություն են ունենում, շարունակաբար իրենց պահանջներն են դնում եւ փորձելու են առավելագույնը ստանալ Հայաստանից:

Միգուցե Տավուշը կլինի այս ամենը կանգնեցնելու միջոցը:

Խոսելով իշխանությունների այն հայտարարությունների մասին, թե Տավուշի սահմանամերձ որոշ տարածքներ, իրականում, ադրբեջանական են, նախկին արտգործնախարարը նշել է, որ դրանք իր համար անընդունելի հայտարարություններ են:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ապրիլի 29-ին ՀՀ նախկին օմբուդսմեն Արմեն Թաթոյանը ասաց, որ առաջին փուլում, պաշտոնական Բաքվի հայտարարություններով՝ Ադրբեջանը ծրագրում է Հայաստանում բնակեցնել մոտ 300 հազար ադրբեջանցիների՝ միջազգային առաքելության հովանու ներքո անվտանգության համակարգի առկայության դեպքում, որին կվստահի, այսպես կոչված, «Արեւմտյան Ադրբեջանի» համայնքը:

ArmLur.am-ի հետ զրույցում Արցախի ԱԺ «Արդարություն» խմբակցության նախկին ղեկավար Դավիթ Գալստյանը, անդրադառնալով հայտարարությանը, ասաց, որ Ադրբեջանի ղեկավարությունը ինչ ասում է՝դա լինում է, քանի որ համապատասխան ընդդիմության չի արժանանում Հայաստանի իշխանությունների կողմից:

«Տեսնելով, որ Հայաստանի իշխանությունները Ադրբեջանի կողմից հայտնած պահանջները կատարում են ժողովրդին մեղավոր սարքելով կամ ժողովրդին ահաբեկելով՝ փորձում են կյանքի կոչել այդ բոլոր պահանջները եւ հետո արդարանում, որ իրականությունը դա է:

Տեսնում ենք, որ Ադրբեջանի բոլոր պահանջները ի կատար են ածվում եւ հերթական պահանջն է դա»-ասաց նա:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՆԱՑԵԼ Է ԱԱԾ ՄԵԿՈՒՍԱՐԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Վիլեն Գաբրիելյանը գնացել է ԱԱԾ մեկուսարան՝ տեսակցելու շուրջ 2 տարի կալանքի տակ գտնվող Դավիթ Տոնոյանին: Տեղեկությունը Ազգային ժողովում փորձեցինք պարզել անձամբ ՔՊ պատգամավոր Վիլեն Գաբրիելյանից, ի պատասխան՝ վերջինս հաստատեց տեղեկությունը՝ նշելով, որ երկու շաբաթը մեկ գնում է եւ տեսակցում նրան:

Հիշեցնենք, որ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, որի քննությունն անցնում է «Հրթիռների գործով», շարունակում է մնալ կալանքի տակ: Դատարանները մերժում են նրա խափանման միջոցը փոխելու եւ ազատ արձակելու բոլոր միջնորդությունները:

2021 թվականի սեպտեմբերի 30-ից Տոնոյանը կալանավորված է, եւ գործով կալանքի տակ էին նաեւ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանը, ԶՈՒ վարչության պետ Ավետիք Մուրադյանը: Այժմ վերջիններս ազատության մեջ են:

Այս գործով մեղադրանք է առաջադրվել նաեւ ԳՇ պետ Արտակ Դավթյանին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՔԱՌՕՐՅԱ ՆԻՍՏԵՐԸ

Այսօրվանից՝ ապրիլի 30-ից, մեկնարկում են ԱԺ քառօրյա հերթական նիստերը:

Օրակարգում, ի թիվս այլ հարցերի, լինելու են՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի 2023 թվականի տարեկան հաղորդումը», «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022-2023 թթ.-ի գործունեության մասին հաղորդումը» եւ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2023 թվականի գործունեությանը վերաբերող տարեկան հաղորդումը»:

Այսօր նիստ կանի ԱԺ խորհուրդը՝ ԱԺ նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը հաստատելու համար:

Հիշեցնենք, որ այսօր ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը գնալու է ԱԺ հանձնաժողով՝ ներկայացնելու «Դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդումը»:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Ա. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՅՑԸ՝ ԳՅՈՒՄՐԻ

Վարչապետի տիկնոջ՝Աննա Հակոբյանի այցը Գյումրի սկանդալային ավարտ է ունեցել: ArmLur.am-ը հայտնել էր, որ օրեր առաջ՝ ապրիլի 25-ին, Աննա Հակոբյանը Գյումրու 45 միջնակարգ դպրոցի մոտ մասնակցել է 44-օրյա պատերազմում նահատակված զինվորի հիշատակին նվիրված հուշարձանի բացման արարողությանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Աննա Հակոբյանը նախ Գյումրիում շատ արհամարհական պահվածք է դրսեւորել, ինչին համապատասխան արձագանք է ստացել տեղացիների կողմից:

Բանն այն է, որ Գյումրու տվյալ դպրոցի տարածքում երկու զինվորի հուշարձան է եղել, սակայն Աննա Հակոբյանը, ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, ծաղիկներ խոնարհել է զինվորներից միայն մեկի հուշարձանին:

Աննա Հակոբյանի այս քայլը քաղաքացիների զայրույթն է առաջացրել. նրանք սկսել են «դավաճան» վանկարկել Աննա Հակոբյանի ներկայությամբ ու ակնհայտ իրենց վերաբերմունքը ցույց տալ նրա նկատմամբ: Այս տհաճ տեսարանից խուսափելու համար՝ Աննա Հակոբյանը արագ ավարտել է արարողությունը ու շտապել է հնարավորինս շուտ հեռանալ այդտեղից: Ավելին՝ մեր տեղեկություններով, վարչապետի տիկինը նման տհաճ միջադեպերից խուսափելու համար Երեւան վերադարձել է ուղղաթիռով:

ԱԼՄԱԹԻԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Էդմոն Մարուքյանն իր ֆեյսբուքյան էջում գրել է. «Միացյալ նահանգների պետքարտուղար Բլինքենի եւ Ադրբեջանի նախագահ Ալիեւի հեռախոսազրույցից հետո հայտնի դարձավ, որ նախատեսվում է Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպում Ալմաթիում: Մինչ այդ ՀՀ ԱԳՆ-ն պնդում էր, որ հավանական հանդիպման մասին անմիջապես կտեղեկացնեն, սակայն, միայն Ալիեւի հայտարարությունից հետո հաստատվեց տեղեկատվությունը: Պետրոս Ղազարյանի հետ ունեցած հարցազրույցներից մեկում, ինձ հարց տրվեց, թե արդյոք մենք պետք է գնանք այլ հարթակներում հանդիպումների-բանակցությունների, եթե Ադրբեջանը այդպես էլ չգա որեւէ արեւմտյան հարթակ: Իմ պատասխանը միանշանակ էր. եթե այլ տարբերակ չլինի, այո՛, մենք պետք է գնանք, որովհետեւ այն վիճակում չենք, որ հրաժարվենք բանակցություններից, եթե, իհարկե, խոսքը գնում է բանակցության մասին եւ ոչ դրա իմիտացիայի: Իմ այդ հարցազրույցից հետո «արեւմտամետի» անվան տակ գործող թուրքական եւ ադրբեջանական գործակալական ցանցը ՀՀ-ում եւ ՀՀ-ից դուրս իրենց եթերներում դատափետեցին ինձ այդ մոտեցման համար, որ ասել էի, թե այլընտրանք չկա հանդիպումներին, եւ ինչ-որ պահի մենք ստիպված ենք լինելու գնալ: Այժմ ՀԱՊԿ անդամ Ղազախստանում ԱԳ նախարարների հանդիպման վերաբերյալ որեւէ քննադատություն չկա այդ նույն գործակալների կողմից: Իսկ հիմա հարց. ո՞ւր են նրանք, ինչո՞ւ նույն ոգեւորությամբ չեն քննադատում: Այստեղից եզրահանգումն այն է, որ իմ դեմ կազմակերպված եւ հստակ ուղղորդված արշավ էր իրականացվում այդ նույն «արեւմտամետի» անվան տակ Թուրքիայի եւ Ադրբեջանի գործակալական ցանցի կողմից»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ «ՄԱՐՏԻ 1»–Ի ԱԿՏԵՐԻ ԳՈՐԾՈՎ

Հայաստանի գլխավոր դատախազությունը «Մարտի 1»-ի գործով ակտերի դասակարգման փոփոխություն է նախաձեռնել: Այս մասին Ազգային ժողովում ապրիլի 29-ին՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության 2023 թվականի գործունեության հաշվետվության քննարկման ժամանակ, ԱԺ պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում ասաց վարչության պետ Աննա Վարդապետյանը:

Նրա խոսքով՝ գլխավոր դատախազի բողոքի հիման վրա Հայաստանի Վճռաբեկ դատարանը դիմել է Սահմանադրական դատարան՝ վարույթն իրականացնող մարմնին ակտի դասակարգումը փոխելու հնարավորություն տալու խնդրանքով: «Նախկին որակումը, որը Սահմանադրական դատարանը ճանաչեց հակասահմանադրական, թույլ չի տալիս այս ակտը վերաորակել այլ հոդվածով: Այն անձանց համար, որոնք գտնվում են միջդատական վարույթում, տեղի է ունեցել վերաորակում: Սակայն դատական վերանայման փուլում գործիքները բացակայում են: Հիմա սպասում ենք, թե ինչ դիրքորոշում կունենա ՍԴ-ն՝ հիմնվելով Վճռաբեկ դատարանի հայտարարության վրա»,- նշեց Վարդապետյանը:

Նա պարզաբանեց, որ պետք է հասկանալ՝ հնարավո՞ր է վերաորակել արարքը երեք նախկին պաշտոնյաների նկատմամբ՝ սահմանադրական կարգի հետ կապված հանցագործությունները ծառայողական հանցագործության մակարդակ տեղափոխելու համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն ապրիլի 29-ին պաշտոնական այցի շրջանակներում հանդիպում է ունեցել Կատարի Պետության խորհրդատվական խորհրդի նախագահ Հասան բին Աբդալլահ Ալ-Ղանիմի հետ:

Հայաստանի Հանրապետության ԱԳՆ-ի տարածած հաղորդագրությունից՝ երկուստեք ընդգծվել է Հայաստանի եւ Կատարի միջեւ զարգացող քաղաքական երկխոսության կարեւորությունը, որին էական խթան են հաղորդում բարձր մակարդակի փոխայցելությունները:

Անդրադառնալով Հարավային Կովկասում հարատեւ խաղաղության հասնելուն ուղղված ջանքերին՝ նախարար Միրզոյանը ներկայացրել է հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ իրականացվող քայլերը, այդ թվում՝ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի նախագծում պահպանվող առանցքային հարցերի շուրջ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը: Ընդգծվել է սահմանազատման գործընթացում առավել հստակության ապահովման կարեւորությունը՝ 1991 թվականի Ալմաթիի հռչակագրի հիման վրա:

ՄԻՐ ԵՆ «ԿՈՐԵԼ» ՋԵՐՄՈՑՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՐՁԻԹՈՂԻ ՎԻՃԱԿ Է

ArmLur.am լրատվականը փետրվարի 28-ին գրել էր հոդված՝ «30 հազար դոլար են ծախսել մեկ ջերմոց կառուցելու համար, որոնցից 4-ը հետո քանդվել է. Սիմիդյանի նախարարությունում բարձիթողի վիճակ է» վերնագրությամբ:

Հոդվածում ներկայացրել էինք, որ դեռ 2023 թվականի հուլիսին շրջակա միջավայրի նախարարությունը հայտնեց, որ անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ը ՄԱԿ-ի՝ Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տարածաշրջանային գրասենյակի հետ համատեղ իրականացրեցին՝ «Հայաստանում անտառների դիմակայության բարձրացում՝ մեղմացման միջոցառումների շնորհիվ հարմարեցման եւ գյուղական վայրերում կանաչ տարածությունների ընդլայնման միջոցով» ծրագիրը:

ArmLur.am-ը տեղեկացել էր, որ սա ամենեւին էլ հօգուտ անտառտնտեսությունների չէր, քանի որ որոշ ժամանակ անց ջերմոցները պիտի ճանաչվեին անորակ, ստանդարտներին ոչ համապատասխան եւ քանդվեին:

Տեղեկացանք նաեւ, որ յուրաքանչյուր ջերմոցի կառուցման համար ծախսվել է մոտ 30 հազար ԱՄՆ դոլար, իսկ այդքան մեծ ներդրումից հետո 6 ջերմոցներից 4-ը քանդվել են: Այսպիսով՝ ստացվեց այնպես, որ «Կանաչ կլիմայի հիմնադրամի» կողմից տրամադրած դրամաշնորհի պլանային կատարումն իրականացրեց ոչ թե պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը, այլ շրջակա միջավայրի նախարարության՝ բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակը:

ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ հենց շրջակա միջավայրի նախարարության՝ բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի պնդմամբ է ՄԱԿ-ի՝ պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը կառուցումը հանձնել նրանց: Ջնջելով Վլադիմիր Կիրակոսյանի կյանքը եւ կենսագրությունը՝ պարզեցինք, որ նա հանդիսանում է շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի մտերիմ ընկերը, ինչը կարող է դառնալ այս գործընթացների իրականացման հանգամանքը: Ստացվում է, որ «պոզով-պոչով» կոռուպցիայի աղբյուրները սկսվել են դեռ ՔՊ-ականների՝ իշխանության գալու սկզբներին:

ArmLur.am-ը դիմել էր ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը՝ հասկանալու համար՝ իսկապե՞ս պայմանագրի արժեքը կազմել է մեկ ջերմոցի համար 30 հազար դոլար, եւ ովքե՞ր են պահանջները կատարող պատասխանատու անձինք: Նախարարությունից ստացել էինք հետեւյալ պատասխանը. «Համաձայն 2021 թվականի փետրվարի 11-ին «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի եւ ՄԱԿ-ի՝ պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության միջեւ կնքված պայմանագրերի՝ ԲԾԻԳ ՊՀ-ն իրականացնում է «Հայաստանի անտառների կայունություն, հարմարվողականության բարձրացում եւ գյուղական կանաչ աճի խթանում մեղմացման միջոցով» դրամաշնորհային ծրագրի՝ «Կլիմայի փոփոխության հետեւանքների մեղմում եւ հարմարվողականություն նոր տեխնոլոգիաների փոխանցման միջոցով» բաղադրիչը: Բաղադրիչի շրջանակներում Հրազդանի, Տաշիրի եւ Սիսիանի անտառտնտեսություններում ջերմատների կառուցման համար կազմակերպվել է գնման գործընթաց, ինչի արդյունքում հաղթող է ճանաչվել «ՎԷՍ Գրուպ» ՍՊԸ-ն:

Ըստ այդմ՝ պայմանագրի ԲԾԻԳ ՊՀ-ին հատկացվել է 79 մլն 200 հազար դրամ Հրազդանի, Տաշիրի եւ Սիսիանի անտառտնտեսություններին՝ ջերմատների կառուցման համար:

«ՎԷՍ Գրուպ» ՍՊԸ-ի եւ ԲԾԻԳ ՊՀ-ի միջեւ գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրով՝ անտառտնտեսություններում մեկ 500քմ խելացի ոռոգման եւ հովացման եղանակով ջերմատան կառուցման արժեքը կազմել է 13 մլն 38 հազար դրամ»:

Ստացվում է՝ ճիշտ ենք, որ յուրաքանչյուր ջերմոցի կառուցման համար մոտ 30 հազար ԱՄՆ դոլար ծախսելուց հետո, ջերմոցները, փաստացի, «հօդս» են ցնդել:

Ավելի վաղ նախարարությունը հանդես էր եկել հայտարարությամբ՝ ասելով. «Աննախադեպ ուժեղ քամիների եւ տարածքին ոչ բնորոշ ձյան առատ տեղումների վերաբերյալ առկա են շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից անցկացված հետազոտությունների տվյալները: «ՎԷՍ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից մեկնարկել են վերականգնման աշխատանքները»:

Հայտարարությունից հետո՝ 2 ամիս կատարած մեր հետեւողական ուսումնասիրությունների արդյունքում, ոչ մի վերանորոգման փաստ չենք արձանագրել:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, վարույթ նախաձեռնելու նպատակով, հարցումով դիմել է նախարարություն նշված կապը գտնելու համար, սակայն նախարարությունից որեւէ լիարժեք պատասխան չի ստացել: Արդյունքում՝ ԿԿՀ-ն եզրակացրել է, որ վերը նշված փոխկապակցվածությունը չկա:

Արդյունքում՝ նախարարությունը, միլիոնների հասնող մսխումները կմնան առերեւույթ անպատիժ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԴԵՊՔ՝ ԴՊՐՈՑՈՒՄ

Shamshyan.com-ի հաղորդմամբ՝ երեկ՝ ապրիլի 29-ին, Երեւանի բնակիչ Կարինե Բրեյանի կողմից ահազանգ է ստացվել Երեւանի թիվ 140 դպրոցում իր քրոջ երեխայի հասցեին հնչեցված վիրավորանքների մասին: «Երեխան դասերից գալիս էր ճնշված, նեղված, ասում էր, որ երեխեքը նեղացնում են, ճնշում: Ես զգուշացրեցի դասղեկ Սոֆյա Եղյանին, խնդրեցի երեխայի տեղը փոխել: Դասղեկը ոչինչ չձեռնարկեց: Անցնում է մի քանի օր, ու դասընկերներից մեկն իր ձեռքը կծում է: Այդ երեխան գնում, խաբար է տալիս դասղեկին, թե իբր իմ երեխան՝ Միլենան է կծել, այնինչ՝ ինքն է իր սեփական ձեռքը կծած լինում: Դասղեկը, փոխանակ ճշտի՝ իրականում ինչ է եղել, իմ երեխային ասում է, որ մի մատով երկու աչքերը կհանի վրայից, «չերեզ» ոստիկանություն ողջ ընտանիքին «կորցնել կտա» ու նման բաներ: Էսօր իմ երեխան վախի մթնոլորտում է սովորում, դասղեկը շատ անգամ հարվածում է երեխաներին».- ասել է կինը:

Կ. Բրեյանը հրավիրել է իրավապահ կառույցների եւ ԿԳՄՍ նախարարության ուշադրությունն ու հետեւողականությունը:

ArmLur.am-ը զրուցել է Երեւանի թիվ 140 դպրոցի՝ տնօրենի ներկայիս ժամանակավոր պաշտոնակատար Մարգարիտա Սահակյանի հետ, ով միջադեպը որակեց թյուրիմացություն՝ մասնավորապես նշելով. «Հրապարակումն արվել է, մենք չենք իմացել: Ծնողների հետ զրուցել ենք, բոլոր հարցերը պարզաբանված են: Թյուրիմացություն, թյուրըմբռնում է տեղի ունեցել դասղեկի եւ ծնողների միջեւ: Բոլոր հարցերը լուծված են, որեւէ խնդիր չունենք: Երեխայի սխալ հասկանալու պատճառով, ուսուցչի սխալ արտահայտության արդյունքում պատահած դեպքի առնչությամբ միասին զրուցել են եւ այժմ ելել են ընդհանուր հայտարարի»:

ArmLur.am-ի հետ զրույցում Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետ Մարգարիտ Խաչատրյանը նշեց, որ միջադեպը հարթված է. «Ամեն ինչ հարթված է, ոչ մի լուրջ բան չի եղել: Հանրակրթության վարչության, ուսուցչի եւ տնօրինության հետ համատեղ աշխատանքներ են իրականացվել, ոլորտները հասկացել են իրար: Նյութերից մեկում նկարագրված դեպքը, բնականաբար, տեղի չի ունեցել»:

Ստացվում է, որ ամեն դեպքում, ինչ-որ դեպք պատահել է, սակայն համապատասխան մարմինների միջամտության արդյունքում այն հարթվել է: Ստացվում է նաեւ, որ ուսուցիչը իրեն ոչ հարիր արտահայտություն, ամեն դեպքում, արել է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆԱՏՕ–Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԿԻԵՎՈՒՄ Է

«ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգը չհայտարարված այցով գտնվում է Կիեւում». - հայտնում է դաշինքի մամուլի ծառայությունը:

Նշվում է, որ նա Վլադիմիր Զելենսկու հետ համատեղ մամուլի ասուլիս է անցկացնում, որը հեռարձակվում է ՆԱՏՕ-ի կայքում:

ԻՆՉ ԿԲԱՑԱՀԱՅՏՎԻ

ԴԱՏԱՎՈՐՆ ՈՒ ՈՍԿՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Ինչո՞ւ է 36 կգ ոսկուց եւ հափշտակված 293 միլիոն ՌԴ ռուբլուց որոշակի չափահասնակ հայտնվել Երեւան քաղաքի դատարանի դատավոր Արշակ Պետրոսյանի մեքենայում:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ դատավորի մտերիմներից մեկը նրան գեղեցիկ փաթեթավորված տոպրակ է տվել՝ նշելով, որ իր կինը կգա կվերցնի: Արդյունքում, երբ իրավապահները օպերատիվ տվյալներ են ունեցել, որ դատավորի մեքենայում է գտնվում հափշտակված գումարի մի մասը, հետեւել է այն, որ Պետրոսյանը անակնկալի է եկել, ու անձամբ է իրավապահներին հորդորել՝ ստուգեն ու պարզեն, որ ինքը այդ դեպքի հետ կապ չունի, եւ իր մտերիմ մարդկանցից մեկն է փոխանցել տոպրակը: Արդյունքում՝ դատավորի մեքենայում հափշտակված իրերից որոշակի մաս է հայտնաբերվել:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իրավապահների տեսադաշտում է հայտնվել մի դատավոր: Մասնավորապես՝ ՀՀ քննչական կոմիտեն քրեական գործի շրջանակում վկայի կարգավիճակում հարցաքննել է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արշակ Պետրոսյանին:

Դատավորի շուրջ ստեղծված իրավիճակի առիթով դիմեցինք ԲԴԽ, որտեղից, ի պատասխան, չմեկնաբանեցին եւ հորդորեցին դիմել իրավապահներին, քանի որ հարցը նրանց տիրույթում է:

Իսկ ահա, նախաքննական մարմնից մեզ հայտնեցին, որ հարցաքննված անձանց վերաբերյալ տեղեկությունը հրապարակման ենթակա չէ:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր, որ ապրիլի 10-ին «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով հետապնդել են «Հունդայի Սոնատա» մակնիշի ավտոմեքենային, եւ ժամը 07:15-ից մինչեւ 07:20-ն ընկած ժամանակահատվածում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մայրաքաղաքային փողոցի դիմաց արհեստական խոչընդոտ ստեղծելով՝ մեքենայի դիմացի աջ դռան պատուհանից զենքի գործադրման սպառնալիքով՝ կանգնեցրել են նշված ավտոմեքենան: Կանգնեցնելուց հետո, ենթադրյալ հանցագործությունը կատարած անձինք, ԱԱԾ աշխատակիցների համազգեստին նմանվող համազգեստով եւ դիմակավորված, դուրս գալով ավտոմեքենայից՝ ներկայացել են իբրեւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ, եւ ավտոմեքենայում գտնվող 3 անձի նկատմամբ զենքի կիրառմամբ բռնություն գործադրելով՝ նրանց դուրս են բերել ավտոմեքենայից, թմրամիջոց ու այլ արգելված իրեր փնտրելու եւ նրանց ձերբակալելու պատրվակով ձեռքերին անցկացրել են ձեռնաշղթաներ, ապա ավտոմեքենայից հափշտակելով առանձնապես խոշոր չափի՝ 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ձուլակտորները եւ 293.000.000 ՌԴ ռուբլի գումարի պարունակությամբ պայուսակները, հիշյալ անձանց նկատմամբ բռնություն գործադրելով՝ նստեցրել են նույն ավտոմեքենան, դիմացի դռնից արցունքաբեր գազ փչելով ավտոմեքենայի մեջ՝ «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով դիմել են փախուստի:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Ա.Ս.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 252-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով, 456-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր 12 անձի նկատմամբ, որոնցից 5-ի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, 3-ի նկատմամբ՝ այլ խափանման միջոցներ, 4 անձի ձեր ակալելու որոշում է կայացվել եւ ոստիկանությանը տրվել է նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու հանձնարարություն:

Ի դեպ, գրել էինք, որ քրեական վարույթով իրավապահների տեսադաշտում է հայտնվել նաեւ «օրենքով գողի» փեսան»:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԿԱԼԱՆՔ՝ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԳՈՐԾՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին քննչական կոմիտեից հայտնել են, որ Ծիծեռնակաբերդի միջադեպի գործով մեկ անձի տանում են կալանքի, իսկ մյուսները ազատ են արձակվել:

Ինչպես հայտնի է, 2024թ. ապրիլի 24-ին՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի անմար կրակին մոտենալու ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Անա Հակոբյանի եւ նրա դստեր ներկայությամբ «Ազգային ժողովրդավարական բեւեռի» անդամները բղավել էին՝ «Նիկոլ դավաճան», «Նիկոլ հողատու»: Միջադեպից հետո 7 անձ ձերբակալվել էր:

Արդյունքում՝ մի խումբ անձանց կողմից առերեւույթ ատելության, խտրականության, անհանդուրժողականության կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք հնչեցնելու, եւ հաղորդակցային-տեղեկատվական մի քանի միջոցներով տարածելու գործողությունների դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի՝ Երեւան քաղաքի քննչական վարչության Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ, ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նույն օրը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից ոստիկանության բաժին է տարվել 7 անձ, որոնք այնուհետեւ ներկայացվել են վարույթն իրականացնող մարմնին:

Որոշումներ են կայացվել վերոնշյալ արարքներն առերեւույթ կատարելու՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով նրանց ձերբակալելու մասին: Հանգամանքները պարզվում են նախաքննությամբ:

ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Վան Անդրանիկի Հարությունյանը մեղադրվում է այն բանում, որ նա, զբաղեցնելով Երեւանի քաղաքապետարանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կոմունալ տնտեսության եւ ԲՇԿՄ հետ աշխատանքների կազմակերպման մասնագետի պաշտոնը, իր նկատմամբ հովանավորչություն դրսեւորելու, այն է՝ նույն վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի կողմից իր հանդեպ բարեհաճ վերաբերմունքի համար, պարգեւավճար ստացած 284.000 ՀՀ դրամ գումարը 2023 թվականի հուլիսի 14-ին որպես կաշառք տվել է Արման Բարխուդարյանին:

Հրայր Հրաչյայի Արամյանը մեղադրվում է այն բանում, որ նա, զբաղեցնելով Երեւանի քաղաքապետարանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի առեւտրի ծառայությունների եւ գովազդի բաժնի պետի պաշտոնը, իր նկատմամբ հովանավորչություն դրսեւորելու՝ առանց հիմնավորմամբ պարգեւատրման ներկայացնելու դիմաց, այն է՝ նույն վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի կողմից առանց հիմնավորման պարգեւատրման համար, ստացած գումարից 72.000 ՀՀ դրամ գումարը 2023 թվականի ապրիլի 15-ին որպես կաշառք տվել է Արման Բարխուդարյանին:

Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, ու գործը ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Հովհաննես Դալլաքյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով առեւտրային կազմակերպության աշխատող, ապօրինաբար, կաշառք տվողների եւ նրանց ներկայացրած անձանց օգտին գործողություններ կատարելու նպատակով՝ ստացել եւ պահանջել է կաշառք:

Բացի դրանից, կազմակերպել է իրավունք վերապահող պաշտոնական փաստաթղթերի կեղծում՝ այլ անձանց կողմից այդ փաստաթուղթը օգտագործելու նպատակով:

Այսպես.

2021 թվականի սեպտեմբերի 11-ից 14-ն ընկած ժամանակահատվածում Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող, առեւտրային կազմակերպություն հանդիսացող «Կարմիր բլուր պոլիկլինիկա» ՓԲ ընկերության մաշկավեներաբան Հովհաննես Մաթեւոսի Դալլաքյանը, քննությամբ դեռեւս ինքնությունը չպարզված անձից որպես կաշառք ստացել է 100.000 ՀՀ դրամ գումար՝ Միլենա Խաչատուրի Հովհաննիսյանի՝ «Covid 19» համավարակի դեմ պատվաստված լինելու վերաբերյալ կեղծ փաստաթուղթ պատրաստելը եւ տրամադրելը կազմակերպելու համար, որից հետո իր հանցավոր մտադրության իրագործումն ապահովելու նպատակով՝ նյութապես շահագրգռելու միջոցով Միլենա Հովհաննիսյանի վերաբերյալ հիշյալ կեղծ փաստաթուղթը պատրաստելուն եւ տրամադրելուն ներգրավել է ՀՀ առողջապահության նախարարության ենթակայությամբ գործող «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲ ընկերության բուժաշխատող, ինչպես նաեւ համատեղությամբ՝ «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» բժիշկ-թերապեւտ եւ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության շտապօգնության ծառայության բժիշկ Վլադիմիր Մարտիկի Ծուղունյանին, որի դրդմամբ «Բժշկուհի Բադանյան» ՍՊ ընկերության բուժքույր Անահիտ Բալաբեկյանը Միլենա Խաչատուրի Հովհաննիսյանի՝ «Covid 19» համավարակի դեմ պատվաստված չլինելու պայմաններում վերջինիս՝ «Sinopharm» պատվաստանյութով պատվաստված լինելու վերաբերյալ կեղծ գրառում է կատարել նույն ընկերության պատվաստումների գրանցամատյանում, որի հիման վրա «Sinopharm» պատվաստանյութի պատվաստման վերաբերյալ կեղծ տեղեկություններ են մուտքագրվել պաշտոնական էլեկտրոնային փաստաթուղթ հանդիսացող «ARMED» համակարգում, եւ նշված համակարգում Միլենա Հովհաննիսյանի անձնական տվյալներով եւ լուսանկարով, ինքնաշխատ եղանակով 2021 թվականի սեպտեմբերի 14-ին կազմվել է պատվաստված լինելու վերաբերյալ իրավունք վերապահող փաստաթուղթ՝ սերտիֆիկատ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ապրիլի 26-ից 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 201 դեպք, որից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵՐԿԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Տավուշի մարզպետարանի անմիջական ենթակայության տակ ընդամենը երկու ոլորտներ կան՝ մարզի հանրակրթական դպրոցները եւ պետական առողջապահական հիմնարկները. այդ ոլորտները մարզպետի աշխատակազմը կառավարում է ԿԳՄՍ եւ առողջապահության նախարարությունների հետ համատեղ: Տավուշի մարզպետի աշխատակազմը խիստ ուռճացած է, այնտեղ կան նաեւ թափուր հաստիքներ, որոնք երկար ժամանակ է՝ չեն լրացվում: Տավուշի մարզպետի աշխատակազմում, ըստ հաստիքացուցակի, առկա է 76 հաստիք, որից 56-ը՝ քաղաքացիական ծառայող. այդտեղ առկա է քաղաքացիական ծառայության 5 թափուր հաստիք: 2023-2024 ուսումնական տարվա շեմին եւ ուսումնական տարվա ընթացքում, բուհի դիպլոմ չունենալու պատճառով, աշխատանքից ազատվել է Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում աշխատող 55 ուսուցիչ: 2023թ. աշնանը բարձրագույն կրթության դիպլոմ չունենալու պատճառով՝ աշխատանքից ազատվեցին Բերդ համայնքի Մովսես, Պառավաքար, Արծվաբերդ եւ Չինարի բնակավայրերի վարչական ղեկավարները: ՏԻՄ օրենքի պահանջներից է, որ 1000 եւ ավելի բնակիչ ունեցող բնակավայրի վարչական ղեկավարը անպայման պետք է ունենա բարձրագույն կրթություն. նշված գյուղերի վարչական ղեկավարները բուհի դիպլոմ չունեն: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարց ենք ուղղել, թե Տավուշի մարզպետի աշխատակազմում, բացի սպասարկող եւ տեխնիկական աշխատողներից, կա՞ն բարձրագույն կրթություն չունեցող պաշտոնյաներ: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում կա միայն երկու աշխատակից, որը չունի բարձրագույն կրթություն»: Ուրեմն, հեռավոր, սահմանամերձ 1000 եւ ավելի բնակիչ ունեցող գյուղերի վարչական ղեկավարները, սահմանամերձ, հեռավոր փոքր դպրոցների ուսուցիչները պետք է անպայման ունենան բարձրագույն կրթություն, իսկ Տավուշի մարզպետարանում պաշտոն են զբաղեցնում՝ առանց բարձրագույն կրթության դիպլոմ ունենալու: Երկակի ստանդարտներ են:

ԿԻՐԱՆՅՈՒՄ ԱՐԴԵՆ ԴՊՐՈՑ ԵՆ ՀԱՃԱԽՈՒՄ

Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանցի հիմնական դպրոցի տնօրեն Վոլոդյա Բաբինյանը հայտնեց, որ ապրիլի 29-ին դպրոցի աշակերտների մեծ մասը հաճախել է դասերին: Այդ դպրոցի աշակերտները, միանալով Կիրանց գյուղին կից սահմանամերձ տարածքները միակողմանի կերպով Ադրբեջանին հանձնելու դեմ համագյուղացիների պայքարին, 4 օր դասադուլ են արել: Վ. Բաբինյանը հայտնեց, որ ապրիլի 30-ին եւ հետագա օրերին Կիրանցի դպրոցի աշակերտները լիարժեք կմասնակցեն դասերին: Դպրոցի տնօրենը հավելեց, որ Կիրանցի դպրոցում այսուհետ շաբաթ օրերին դասեր կլինեն, որպեսզի դասադուլի օրերին բաց թողնված դասերը լրացվեն, եւ աշակերտները հետ չմնան ուսումնական ծրագրից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԵՂԱՆԱԿԸ ԲԱՑԱՍԱԲԱՐ Է ԱՋԴԵԼ

ԳԻՆՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՈՒՄ

«Հրդեհները, երաշտները եւ այլ դայմանները, որոնք սովորաբար կապված են կլիմայի գլոբալ փոփոխության հետ, զգալիորեն «նպաստել» են, որ 2023 թվականին համաշխարհային գինու արտադրությունը ամենավատն է վերջին 62 տարվա ընթացքում».- ասում են ոլորտի դաշտոնյաները:

Խաղողի եւ գինու ոլորտի համաշխարհային՝ 2023 թվականի զեկույցում, որը հրապարակվել է Ֆրանսիայում գործող «Գինեգործների եւ գինեգործների միջազգային կազմակերպության» կողմից, նշվում է «ծայրահեղ բնապահպանական պայմանները», որպես 2023 թվականին գինու համաշխարհային արտադրության 10% անկման հիմնական պատճառ:

Կազմակերպության տնօրեն Ջոն Բարքերի խոսքով՝ «երաշտը, ծայրահեղ շոգը եւ հրդեհները, ինչպես նաեւ հորդառատ անձրեւները, որոնք առաջացրել են հեղեղումներ եւ սնկային հիվանդություններ հյուսիսային եւ հարավային կիսագնդերի հիմնական գինեգործական շրջաններում», եղել են գինու արտադրության համաշխարհային մակարդակի անկման հիմնական գործոնները:

Գինու արտադրության 10% անկումն ամենասուրն է եղել վերջին 62 տարվա ընթացքում, ասվում է արդյունաբերության զեկույցում: Խաղողի բերքը ամենացածրն է եղել 1961 թվականից ի վեր:

Ավստրալիայում գինու արտադրության 26% անկումը եւ Իտալիայում 23% անկումը այս երկրներում 2023 թվականի վատագույն արդյունքն են: Իսպանիան կորցրել է իր գինու արտադրության ավելի քան 20%-ը, մինչդեռ Չիլիում եւ Հարավային Աֆրիկայում յուրաքանչյուրը անկում է ապրել 10%-ով:

Ֆրանսիան՝ աշխարհի ամենամեծ գինի արտադրողը, անցյալ տարի գրանցել է 4 տոկոս աճ, ասվում է զեկույցում:

Բացի բնակլիմայական պայմաններից, զեկույցում նշվում է, որ խաղող աճեցնելու եւ գինի պատրաստելու համար գնալով ավելի քիչ հող է հասանելի դառնում:

Խաղողի եւ գինու արտադրության համար հասանելի հողատարածքները նվազել են երրորդ տարին անընդմեջ՝ ընդամենը 17,7 միլիոն ակր հատկացված խաղողագործությանը եւ գինեգործությանը ամբողջ աշխարհում:

Զեկույցը նաեւ ցույց է տվել, որ 2023 թվականին սպառողները 3%-ով ավելի քիչ գինի են խմել՝ Չինաստանում գնաճի եւ տնտեսական աճի դանդաղման պատճառով, ինչը հանգեցրել է երկրում գինու սպառման 25%-ով անկմանը:

Գինու համաշխարհային կազմակերպությունը ներառում է 50 երկիր, որոնց բաժին է ընկնում համաշխարհային գինու արտադրության 75%-ը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անցյալ շաբաթ դեսպան ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը ողջույնի խոսք է հղել «Հետտրավմատիկ արտթերապիայի» եռօրյա աշխատարանի մասնակիցներին: Աշխատարանը տեղի է ունեցել Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում (ՀՄԿ), որը վարել է ԱՄՆ-ից փորձագետ, արտթերապիայի հավաստագրված մասնագետ Դեյվիդ Միթչելը:

Դեյվիդ Միթչելը հոգեկան առողջության հարցերով առաջատար մասնագետ է, ունի գործնական փորձառություն եւ աջակցության նպատակով կիրառում է ստեղծագործական մոտեցումներ: Ապրիլի 22-ից 29-ը Դեյվիդ Միթչելը աշխատարաններ է վարել հայ մասնագետների համար՝ գործակցելով ՀՄԿ-ի, «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի եւ «Վորլդ վիժըն Արմենիա» կազմակերպության հետ:

Այցի ընթացքում նա նաեւ խորհրդակցություններ է անցկացրել տեղահանված անձանց սոցիալ-հոգեբանական ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաեւ աշխատարաններ ու կարողությունների զարգացման ու վերապատրաստման դասընթացներ՝ հոգեկան առողջության մասնագետների, սոցիալական աշխատողների, մանկավարժների, դպրոցների հոգեբանների համար՝ շեշտադրելով տեղահանված անձանց ներառման կարեւորությունը: Դեյվիդ Միթչելը, լինելով Ամերիկայի Միացյալ Նահանգների «Խաղաղության կորպուսի» նախկին կամավոր, առիթ է ունեցել տարիներ առաջ բնակվել Հայաստանում եւ ամուր կապեր ունի երկրի հետ:

«Տեղահանումը կարող է նշանակալի հոգեբանական ու սոցիալական սթրես լինել անձի, ընտանիքի, երեխաների համար: Դեյվիդ Միթչելը կներկայացնի ամերիկյան փորձը, որը, հուսով ենք, կօգնի կատարելագործել հայ մասնագետների կարողությունները՝ հնարավորություն տալով առավել լավ արձագանքել տեղահանված անձանց կարիքներին ու նպաստել համայնքներում նրանց ներառմանը», - ասել է դեսպան Քվինը:

ՍՐԲԱԶԱՆԸ՝ ՀԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՐԲԱԶԱՆԻ

Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Սարգսյանը զորակցական նամակ-ուղերձ է հղել Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանին:

Սրբազան հոր նամակ-ուղերձում գրված է.

«Բարձրաշնորհ Տ. Բագրատ Ս. արք. Գալստանեան

Քաջարի եւ բարեջան առաջնորդ Տաւուշի հայոց թեմի

Իջեւան

Սիրելի Սրբազան եղբայր,

Վերջին օրերուն հետեւում ենք Տաւուշի մէջ տեղի ունեցած եւ ունենալիք դէպքերին: Այս րոպէին երանի եմ տալիս Ձեր կողքին եղող Միքայէլ Սրբազանին, Յովնան Սրբազանին, Արշակ Սրբազանին եւ բոլոր նրանց, որոնք այս րոպէին Ձեր կողքին եւ Տաւուշի մեր ժողովրդի կողքին են:

Դուք Ղեւոնդ Երէցիան ոգիով նոր Աւարայր էք մղում հայրենիքին եւ հաւատքին պահպանման համար: Որքան կը փափագէի, որ այս րոպէներին Ձեզի հետ ըլլալ, բայց ուզում եմ վստահեցնել, որ Թեհրանի մեր ժողովրդի մեծագոյն մասն իր մանուկներով, երիտասարդներով եւ տարեցներով Ձեր կողքին կանգնած է եւ աղօթում է Ձեր յաջողութեան համար, որովհետեւ Ձեր յաջողութիւնը մեր յաջողութիւնն է: Մենք չենք կրնար անտարբեր եւ լուռ անցնիլ այս բոլորին ի տես: Կասկած չկայ, որ մեր ժողովուրդը Հայրենիքի եւ Սփիւռքի տարածքին, բոլորն էլ Ձեր կողքին են: Ես ուզում եմ վստահեցնել միաժամանակ, որ հնարաւորութեան սահմաններում մենք բոլորս էլ պատրաստ ենք Ձեզ հետ պայքարը շարունակել մինչեւ այն երջանիկ պահը երբ պիտի կարենանք մեր ծրագիրների իրագործումը տեսնել: Մինչ այդ աղօթակից ենք Ձեր եւ մեր ժողովրդին՝ Տաւուշի մէջ եւ Տաւուշէն հեռու եւ կը մաղթենք առաւել ուժ, դիմադրական ոգի ու կորով եւ անվտանգ պայքար:

Սիրելիներ, թող Աստծոյ հովանին Ձեր վրայ եւ ժողովրդի վրայ ըլլայ ի խնդիր մեր հայրենիքի ապահովութեան եւ խաղաղ կեանքի կեցութեան համար:

Բոլորս միասին պիտի պայքարենք սիրելիներ, մեր ժողովուրդի իրաւունքների պահպանման համար՝ Տաւուշում եւ այլուր, որովհետեւ այս հողերը մեր ժողովուրդը մեզի կտակած է իր արեան յեղումով եւ չենք կրնար մենք թափուած արիւնը իսպառ մոռանալ: Վստահ ենք, որ այն պիտի վերընձիւղի մեր հայրենիքի հողին ամէն մէկ շերտին վրայ եւ ծնունդ պիտի տայ նոր Ղեւոնդ Երէցներու, ծնունդ պիտի տայ նոր մարտիկներու եւ նոր հերոսներու:

Ողջ մնացէք ի Տէր:

Քրիստոնէական եւ եղբայրական ջերմ սիրով՝

ԱՂՕԹԱԿԻՑ՝

ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ»:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 28 պատահար. 5 մարդ զոհվել է, 47-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՆՈՐ ՏՐԱՆՇԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

Սույն թվականի ապրիլի 19-ից հունիսի 6-ը «Ֆասթ բանկը» նախատեսում է տեղաբաշխել 11% տարեկան եկամտաբերությամբ 100,000 ՀՀ դրամ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր: Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը 2,000,000,000 ՀՀ դրամ է: Բանկի պարտատոմսերը թողարկվել են 30 ամիս մարման ժամկետով եւ արժեկտրոնային եռամսյակային վճարման պարբերականությամբ:

Անվանական արժեկտրոնային պարտատոմսերը հնարավոր է ձեռք բերել «Ֆասթ բանկի» 33 մասնաճյուղերից, տեղաբաշխող «Դայմենշն» ՓԲԸ-ից կամ այլ ներդրումային ծառայություններ մատուցող ընկերություններից՝ լրացնելով հայտ-հանձնարարականը եւ, մինչեւ տվյալ օրվա ժամը 15:30-ը գումարը փոխանցելով տրամադրված հաշվեհամարներին: Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր, հանրային ծառայությունների համարանիշ, ինչպես նաեւ բանկային հաշիվների տվյալներ:

Բանկի տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից: Ցուցակված պարտատոմսերից ստացված եկամուտները ֆիզիկական անձանց դեպքում հարկման ենթակա չեն:

ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գարեգին Խաչատրյանի հանձնարարագրերի հիման վրա՝ տեսչական մարմինը հրդեհատեխնիկական հետազոտություններ է իրականացրել Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, քաղաք Գավառ, Հացառատ թաղամաս, Հ. Աբրահամյան փողոց հասցեում անհատ ձեռնարկատիրոջ կողմից շահագործվող բենզալցակայանի, ինչպես նաեւ Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Մարքսի փողոցի վերջնամասում անհատ ձեռնարկատիրոջ կողմից շահագործվող հեղուկ վառելիքի վաճառքի կետի՝ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ:

Տեսչական մարմնի եւ Արտաշատի համայնքապետարանի հետ համագործակցության արդյունքում դիզվառելիքի վաճառակետն ամբողջությամբ ապամոնտաժվել է:

«ԱՇԽԱՐՀ՝ ԱՌԱՆՑ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ»

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ապրիլի 25-ից 26-ը Հայաստանում անցկացվել է՝ «Դեպի աշխարհ՝ առանց խոչընդոտների. հաշմանդամություն ունեցող անձանց ներառական սոցիալական պաշտպանության քաղաքականության առաջխաղացման» խորագրով երկօրյա տարածաշրջանային համաժողովը. այն կայացել է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությամբ՝ Ասիական զարգացման բանկի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համագործակցությամբ:

Միջոցառման նպատակն էր ապահովել տարածաշրջանային հարթակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության եւ սոցիալական ներառման ոլորտում արձանագրված ձեռքբերումների եւ դեռեւս արդիական խնդիրների քննարկման համար, մասնավորապես՝ դիտարկելով սոցիալական ծառայությունները՝ որպես ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի, համապատասխան գլոբալ ու տարածաշրջանային օրակարգերի իրականացման կարեւոր բաղադրիչ:

Միջոցառմանը ելույթներ են ունեցել նաեւ ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը, համաժողովի համակազմակերպիչ ԱՍՀ նախարարի տեղակալ Տաթեւիկ Ստեփանյանը, Առողջապահության նախարարի տեղակալ Արտակ Ջումայանը, Ասիական զարգացման բանկի մարդկային եւ սոցիալական զարգացման սեկտորի գրասենյակի տնօրեն Վենդի Ուոքերը, Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖԻ ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը եւ այլ հյուրեր:

«Որպես հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտը համակարգող հիմնական գերատեսչություն՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ամենօրյա աշխատանքը շարունակում է ուղղված լինել նաեւ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ստեղծմանը, նրանց տարիքին ու գնահատված կարիքին համարժեք հասցեական ծառայությունների մատուցմանն ու զբաղվածության ապահովմանը», - իր ելույթում շեշտել է նախարար Նարեկ Մկրտչյանը:

Մկրտչյանը նշել է, որ իրականացվող եւ նախատեսվող բարեփոխումները իրապես կկարողանան լուծել ոլորտում առկա հիմնահարցերը եւ նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լիարժեք իրացմանը:

Նախարարության ներկայացուցիչները համաժողովի մասնակիցներին ներկայացրել են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտում Հայաստանի Հանրապետության՝ ՄԱԿ-ի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների շրջանակում իրականացված քայլերը, օրենսդրական դաշտի բարեփոխումներն ու նոր կարգավորումները, հաշմանդամության սահմանման նոր մոդելի՝ անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի կիրառման աշխատանքները:

«Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի գործադիր տնօրեն Անահիտ Պարզյանը ներկայացրել է անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի կիրարկման նպատակով ստեղծված «e-disability» թվային գործիքը, որը մասնագետներին հնարավորություն է ընձեռում հավաքագրել գնահատվող անձի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն՝ ըստ հաշմանդամության տեսակների եւ ֆունկցիաների սահմանափակման աստիճանների:

Համաժողովի ընթացքում տեղի են ունեցել պանելային քննարկումներ. 15 երկրի տարբեր փորձագիտական մակարդակում աշխատանք իրականացնող փորձագետները, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների եւ այլ երկրների համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչները խոսել են ներառական սոցիալական քաղաքականության իրենց երկրների փորձառության, իրականացված բարեփոխումների եւ աշխատանքների մասին: Անդրադարձել են հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող աջակցող միջոցների հասանելիության, տարիքային խմբերի եւ հաշմանդամության տեսակների հիման վրա տրամադրվող սոցիալական աջակցության փաթեթին ու մատուցվող ծառայություններին, հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների թվայնացման գործընթացի կարեւորությանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Ռուբինյանց փողոց, 4ա շենք, 39 հասցեում գտնվող 50,4 քմ բնակարան եւ 1,8 քմ ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝31130000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Ե. Թադեւոսյան փողոց, 12/7 շենք, 36 հասցեում գտնվող 64 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝32600000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Արթիկ, Արթիկ ք., Հ. Շիրազի փողոց, 33 հասցեում գտնվող 316,3 քմ բնակելի տուն եւ 0,104 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18670000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի, Մարտունի ք., Գ. Ջիրոյան փողոց, 25 շենք, 40 հասցեում գտնվող 62,7 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝13760000 ՀՀ դրամ:
- Վայոց ձորի մարզ, համայնք Վայք, Վայք ք., Չարենցի փողոց, 6/1 հասցեում գտնվող 79,1 քմ բնակելի տուն, 9,2 քմ օժանդակ շինություն եւ 0,02 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝10400000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Կոմիսարների փողոց, 2/1 հասցեում գտնվող 390,51 քմ բնակելի տուն, 136,6 քմ կիսակառույց շինություն /ավարտվածության աստիճանը՝ անավարտ/, 1,42 քմ /3,27 խմ/ պարիսպ եւ 0,072 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝33100000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Ա. Եղյան փողոց, 32 հասցեում գտնվող 232.4 ք.մ. բնակելի տուն, 4.6 ք.մ. սանհանգույց եւ 0.0709 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝27650000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Շահումյան փողոց, 4 հասցեում գտնվող 240,3 ք.մ. բնակելի տուն, 62,8 ք.մ. բնակելի տուն, 3,7 քմ կաթսայատուն, 14,6 քմ խոհանոց, 19,6 քմ ավտոտնակ, 18,55 քմ անասնաշենք, 6 քմ /10,8 խմ/ պարիսպ եւ 0.133 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝17710000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., Նոր թաղամաս, 15-րդ շենք, 30 հասցեում գտնվող 82,16 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18410000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Այնթապ, 2-րդ շարք, 79 հասցեում գտնվող 181.3 ք.մ. բնակելի տուն, 6.3 ք.մ. լողարան, 1.7 ք.մ. կաթսայատուն եւ 0.0414 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝29850000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Ա.Մանթաշյան փողոց, 1 շենք, 15 հասցեում գտնվող 61,75 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝31750000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 16.05.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 20.06.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ZARA

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նորաձեւության ոլորտի զանգվածային շուկայի, կամ ինչպես հայտնի է «մասս մարկետ»-ի հիմնադրման հարցում մեծ է ZARA ապրանքանիշի դերը. այն հագուստի առաջին ապրանքանիշն է, որը արտադրել է նորաձեւ հագուստ՝ մատչելի գներով:

Առհասարակ, զանգվածային շուկան նպատակ ունի նորաձեւության վերջին թրենդները հասանելի դարձնել հասարակության ոչ շատ վճարունակ հատվածին՝ հնարավորություն ստեղծելով լինել նորաձեւ: Միակ բացասական կողմն այն է, որ նման ապրանքանիշների կողմից արտադրված հագուստը երբեմն ոչ այնքան որակյալ է լինում, սակայն կան ապրանքանիշներ, որոնց հագուստի որակը չի զիջում «լյուքս» դասի ապրանքանիշների որակին:

Զանգվածային շուկայի հիմնադրման հարցում էական նշանակություն ունի կարի մեքենաների արտադրությունը: Այն մեծ թափ առավ 19-րդ դարի կեսերին՝ սկիզբ դնելով հագուստի զանգվածային արտադրությանը: Եվ միայն 20-րդ դարում նորաձեւությունը դարձավ օրինական արդյունաբերություն՝ բառի ինստիտուցիոնալ իմաստով:

Անդրադառնալով նորաձեւության ոլորտում զանգվածային շուկայի դերակատարներին՝ պետք է նշել, որ առաջիններից մեկը, որը հիմք դրեց մատչելի նորաձեւությանը, իսպանական ZARA ապրանքանիշն է:

Այն հիմնադրել է չափազանց աղքատ ընտանիքում ծնված Ամասիո Օրթեգան, ով 13 տարեկանից ստիպված էր աշխատել կարի արտադրամասում: Հագուստի մոդելավորողը, որի մոտ Ամասիոն աշխատում էր Գալիսիայում, նկատում է նրա կազմակերպչական տաղանդն ու կտորի ու կարի հետ աշխատելու ցանկության պակասը եւ նրան տեղափոխում է այլ աշխատանքի: Տասը տարի կառավարման փորձ ձեռք բերելուց հետո՝ Ամասիո Օրթեգան, կինը, քույրն ու եղբայրը անձնական գործ են սկսում՝ կարելով գիշերազգեստներ եւ ներքնազգեստներ:

1975 թվականին, երբ Օրթեգաների գերմանացի գործընկերները չեն վերցնում արտադրած մեծ քանակությամբ ներքնազգեստի պատվերը, Ամասիո Օրթեգան վաճառում է իր ողջ ունեցվածքն ու խանութ բացում Լա-Կորունյա քաղաքի գլխավոր փողոցներից մեկում, որտեղ էլ վաճառքի է հանում պատրաստ օրինակները: Խանութն ի սկզբանե անվանվում է Zorba, սակայն գրանցման հետ կապված խնդիրների պատճառով ստիպված են լինում վերանվանել այն՝ կոչելով ZARA: 1985 թվականին խանութների ցանցի վերածված ZARA-ի հիմքի վրա ստեղծվում է Inditex Group-ը, որին ապագայում մաս է կազմում Massimo Dutti-ին, ստեղծվում են Pull and Bear-ն ու Bershkan, ապա նաեւ Stradivarius-ը եւ Oysho-ն:

1988 թվականին Ամասիո Օրթեգան սկսում է ցանցի խանութներ բացել նաեւ իսպանիայից դուրս: Այսօր Inditex Group-ը ողջ աշխարհում ունի ավելի քան 7 հազար խանութ:

ZARA ապրանքանիշը հիմնադրելով՝ Օրթեգան նպատակ ուներ նորաձեւության թրենդները հասանելի դարձնել հասարակությանը՝ ավելի արագ եւ ավելի մատչելի արտադրությամբ: Հայտնի է, որ նորաձեւության ոլորտում հայտնի «լյուքս» դասի ապրանքանիշների հիմքում կանգնած նորաձեւության տները հավաքածուներ էին թողարկում տարին երկու անգամ, եւ դրանցում ընդգրկված հագուստները շուկա էին դուրս գալիս ցուցադրությունից մի քանի ամիս անց միայն: Ամասիո Օրթեգան նպատակ է դնում հնարավորինս սեղմ ժամկետում արտադրել մեծ քանակությամբ նորաձեւ հագուստ եւ այնպես անել, որ դրա վրա ծախսված գումարը շատ չլինի՝ թույլ տալով ապահովել մատչելի գներ: Հեռատես գործարարի այս քայլը նորաձեւության տներին ստիպում է արագացնել արտադրական գործընթացը եւ ավելացնել տարվա ընթացքում տեղի ունեցող ցուցադրությունների քանակը՝ հիմք դնելով միջսեզոնային հավաքածուներին:

Ապրանքանիշի հաջողության հիմքում հագուստի գեղեցկությունն է, պարզությունը, հարմարավետությունն ու կայունությունը: Պետք է նշել նաեւ, որ ZARA-ն երբեք գովազդային արշավներ չի իրականացրել, սակայն համարվում է ամենաշատ սպառում ունեցող ապրանքանիշներից մեկը:

Այսօր ZARA խանութները նորաձեւության ոլորտի զանգվածային շուկայում միակն են, որոնց կարելի է հանդիպել «լյուքս» դասի ապրանքանիշերի խանութների կողքին: Ապրանքանիշն այնքան որակյալ եւ նորաձեւ է, որ այն կրում են նաեւ թագավորական ընտանիքների ներկայացուցիչները՝ էլ ավելի հաջողություն բերելով ZARA-ին:

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ԳՈՅ»

ՀԱՅՏՆԻ Է ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ

Ինչպես ավելի վաղ հայտնել էր ArmLur.am-ը, «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը վերակազմավորման ձեւով միացվել էր «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը, ինչից հետո, «Գոյ» թատրոնի դերասանական անձնակազմը սկսել էր բողոքի ակցիաներ իրականացնել, որին էլ հաջորդեց անժամկետ նստացույցը:

ArmLur.am-ը կապ հաստատեց թատրոնի ռեժիսոր Սարգիս Արզումանյանի հետ՝ հասկանալու համար, թե հիմա ինչ փուլում են գտնվում թատրոնի գործերը:

Մեզ հետ զրույցում Սարգիս Արզումանյանն ասաց, որ հիմա բանակցային փուլում են եւ առաջիկայում դատական նիստ է սպասվում:

«Հիմա բանակցային փուլում ենք, դեռ չենք ավարտել, խոսում ենք, զրուցում, ընթացքի մեջ ենք. տեխնիկական հարցեր կան, այսպես ասած, փաստաթղթեր կան, որ փորձում ենք կարգավորել: Մայիսի 7-ին դատական նիստ ունենք».-ասաց Արզումանյանը:

Հարցին, թե ինչ սպասելիքներ ունեն դատական նիստից, Արզումանյանն ասաց, որ կարծում են՝ պետք է որ արդարադատություն լինի ամեն դեպքում, եւ իրենց ակնկալիքը դա է:

Հիշեցնենք, որ «Գոյ» թատրոնի 23 դերասաններ դիմել են ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության՝ պահանջելով ԿԳՄՍ նախարարության գործողությունները եւ որպես հետեւանք՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից սույն թվականի հունվարի 30-ին Օրենքի 45-րդ հոդվածով սահմանված կարգով կատարված կազմակերպությունների՝ «ԱՐՄԵՆ ՄԱԶՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԵՄԱՐՎԵՍՏԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ «ԳՈՅ» ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ միացման ճանապարհով վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումները ոչ իրավաչափ ճանաչել:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ՝ ԱԶՆԱՎՈՒՐԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակում Two Arcs պատկերասրահում բացվեց քանդակագործ Մկրտիչ Մազմանյանի հայաստանյան առաջին ցուցահանդեսը:

Ցուցահանդեսին ներկայացված են վարպետի՝ Ազնավուրին պատկերող դիմաքանդակները, կոմպոզիցիոն աշխատանքներն ու գծանկարները: Մազմանյանական Ազնավուրը ուղիղ վերարտադրություններ չեն, այլ էմոցիոնալ պատկերներ են՝ վերաբերմունք ու հարգանքի տուրք մեծ շանսոնյեին:

Միջոցառմանը մասնակցում էին «Ազնավուր» հիմնադրամի համահիմնադիր եւ հոգաբարձուների խորհրդի նախագահ Նիկոլա Ազնավուրը եւ նրա կինը՝ «Ազնավուր» հիմնադրամի գործադիր տնօրեն Քրիստինա Ազնավուրը:

«Շառլ Ազնավուրի կյանքն ու անցած ուղին մշտապես ոգեշնչել են բազմաթիվ արվեստագետների ոչ միայն երաժշտության բնագավառից, այլեւ արվեստի այլ ոլորտներից: Մկրտիչ Մազմանյանի աշխատանքներում մենք տեսնում ենք քանդակագործության հանդեպ նրա ունեցած սերը եւ արվեստի փոխակերպող ուժը: Ցանկանում ենք «Ազնավուր» հիմնադրամի անունից շնորհակալություն հայտնել պարոն Մազմանյանին՝ Շառլ Ազնավուրին նվիրված ստեղծագործությունների վրա աշխատելու եւ արտիստի հարյուրամյակի առթիվ դրանք ցուցադրելու համար», - նշում է Նիկոլա Ազնավուրը:

Ցուցահանդեսի բացման միջոցառմանը ներկա են եղել կառավարության անդամներ, մշակույթի նշանավոր գործիչներ եւ արվեստը գնահատող բազմաթիվ հյուրեր: Ցուցահանդեսը կգործի մինչեւ մայիսի 10-ը:

Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՓՈԽՉԵՄՊԻՈՆ

Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում ավարտին մոտեցող բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչ Բարեղամ Հարությունյանը նվաճեց արծաթե մեդալ:

48 կիլոգրամ քաշային կարգի եզրափակչում նա մենամարտեց Ռուսաստանի ներկայացուցիչ Էդմոնդ Խուդոյանի հետ, որն առավելության հասավ 5:0 հաշվով:

Տիտղոսի համար ռինգ դուրս կգա նաեւ Նարեկ Մանասյանը (92 կգ): Նա կմենամարտի ռուսաստանցի Մուսլիմ Գաջիմագոմեդովի հետ:

Եվրոպայի առաջնությունում Հայաստանի թիմից բրոնզե մեդալակիրներ են դարձել Անուշ Գրիգորյանը (50 կգ), Անի Հովսեփյանը (70 կգ), Արթուր Բազեյանը (57 կգ), Արթուր Սահակյանը (60 կգ) եւ Արարատ Հարությունյանը (67 կգ):

● Մայիսի 7-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Համլետ» ներկայացումը՝ ըստ Շեքսպիրի համանուն պիեսի: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ մրցութային հավասար միավորների դեպքում ո՞ր դիմորդներին է տրվում առավելություն:

Նարինե Մելքոնյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ մրցութային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին,
2) արվեստի գծով միջազգային եւ հանրապետական մրցույթների հաղթողներին,
3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին,
4) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բուհերի առկա ուսուցմամբ տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների եւ ընդունելության քննությունների ցանկում բուհի կողմից նշված առաջին մրցութային քննությունից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին,
5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական գնահատական ունեցող դիմորդներին,
6) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի՝ մինչեւ երկու անվճար եւ մինչեւ ութ վճարովի մասնագիտությունների մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտությունների համար սահմանված բոլոր քննությունները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք:

Երանուհի Հայրապետյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ե. Հայրապետյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչեւ 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված՝ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք հաշվառման նպատակով պետք է դիմեն իրենց փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին): Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար դիմումը ներկայացնում է ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձը անձամբ կամ օրինական ներկայացուցչի կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Երեւան Մարաթոն»-ը ամենամյա երկար տարածության վազքի միջոցառում է, որը կազմակերպվում է Հայաստանի մայրաքաղաք Երեւանում: Հինգ տարվա դադարից հետո մարաթոնը կրկին անցկացվեց:

«Երեւան Մարաթոնն» այս տարի կաջակցի ՀԲԸՄ-ի արցախահայության աջակցության ծրագրերին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 6 + 10 +23 + 27
Կոտայքի լեռներ	+ 6 + 9 +23 + 25
Կոտայքի նախալեռներ	+11+ 13 +24 + 28
Գեղարքունիք	+ 4 + 8 +21 + 24
Լոռի	+ 6 + 10 +24 + 27
Տավուշ	+10 + 15 +26 + 29
Արագածոտնի լեռներ	+ 6 + 8 +22 + 24
Արագածոտնի նախալեռներ	+10 + 14 +24 + 29

Արարատ	+13 + 15 +30 + 33
Արմավիր	+11 + 13 +30 + 32
Վայոց ձորի լեռներ	+ 7 + 9 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+12 + 14 +30 + 32
Սյունիքի հովիտներ	+13+ 16 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12 +23 + 26
ԼՂՀ	+ 9 + 11 +24 + 26
Երեւան	+ 15+ 18 + 31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*